Արձանագրություն № 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 – 24 հունվարի 2020թ. Ժամը 11:30

Մասնակցում էին

հանձնաժողովի

Նախագահ՝ Մ. Բալյան

Անդամներ՝ Է.Հարությունյան, Ա.Պետրոսյան

Քարտուղար՝ Լ.Նալբանդյան

Բացակայում էր՝

1. «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն, որ՝

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի նախագահողը հրապարակել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով մրցույթի նախահաշվային գինը:

1.1 Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը՝

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1. | «Պահապան 1» ՍՊԸ | ք. Երևան Ավան Քուչակ 16/2, հեռ.010 625911, Pahapan199@mail.ru |

1.2. Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ծածկագրով մրցույթի մասնակից «Պահապան 1» ՍՊ ընկերությունը փակ կնքված ծրարով ներկայացրել է.

- ✓ դիմում - հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու
- ✓ գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպության ներկայացված փասթաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.4. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

«Պահապան 1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-71» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ / հհ դրամ/

| Հ/Բ | ծառայության անվանումը | Չ/մ | Քանակ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | օբյեկտի պահպանության ծառայություն | դրամ | 1 | 9 600 000 | 1 920 000 | 11 520 000 |

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածը, «Պահապան 1» ՍՊ ընկերության հետ վարվել է գների նվազեցման բանակցություն, որի արդյունքում վերոնշյալ մասնակիցը նվազեցրել է գինը 1 620 000 (մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամով, առաջարկելով 9 900 000 (ինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայության մատուցման գործող պայմանագրի ժամկետը ավարտվում է ս.թ. հունվարի 31-ին և ելնելով պահպանության ծառայության անընդհատության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև, որ նոր գնման գործընթացի արդյունքում մինչև գործող պայմանագրի ժամկետի ավարտը պայմանագրի կնքումը անհնար է՝

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հաղթող ճանաչել «Պահապան 1» ՍՊ ընկերությանը:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Պահապան 1» ՍՊ ընկերությանը՝ մինչև 9 900 000 (ինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Ընդունվել է որոշում՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0

3.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Մ. Բալյան

Անդամներ՝ ______________________ Է.Հարությունյան

______________________ Ա.Պետրոսյան

Քարտուղար՝ ______________________ Լ.Նալբանդյան